ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը և Բելառուսի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

առաջնորդվելով երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների հետագա ամրապնդման և զարգացման ձգտումներով,

ցանկանալով ամրապնդել երկկողմ համագործակցությունը բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման բնագավառում,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, իրենց պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան և իրենց իրավասությունների շրջանակներում, կհամագործակցեն հետևյալ ուղղություններով.

1. տեղեկատվության, պարբերական հրատարակությունների, մեթոդական և գիտատեխնիկական գրականության, գիտահետազոտական աշխատանքների արդյունքների, տեսա- և լուսանկարչական նյութերի փոխանակում,
2. համատեղ աշխատանքային խորհրդակցությունների, սեմինարների, խորհրդաժողովների, ուսումնական դասընթացների, մարզումների, վարժանքների, գիտահետազոտական նախագծերի և այլ միջոցառումների պլանավորում, մշակում և անցկացում,
3. մասնագետների պատրաստման կազմակերպում Կողմերի կրթական հաստատություններում, փորձնակների, դասախոսների, գիտնականների, մասնագետների և այլ ներկայացուցիչների փոխանակում,
4. տեխնիկական, սոցիալական և մարդասիրական համագործակցության համատեղ նախագծերի մշակում և իրականացում,
5. անհրաժեշտության դեպքում երրորդ կողմ հանդիսացող երկրներին բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանն ուղղված համատեղ օգնության ցուցաբերում,
6. համագործակցություն Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի և Սպիտակի երկրաշարժի հետևանքների հաղթահարման ուղղությամբ,
7. Կողմերի իրավասությունների շրջանակներում այլ գործունեության իրականացում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն փոխգործակցության միջգերատեսչական հայ-բելառուսական համատեղ հանձնաժողով արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման բնագավառում: Համատեղ հանձնաժողովի նիստերը կանցկացվեն հաջորդաբար Բելառուսի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում՝ Կողմերի հետ համաձայնեցմամբ: Համատեղ հանձնաժողովի կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում են Կողմերի ներկայացուցիչների առաջին հանդիպման ժամանակ:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված դրույթների իրագործման պայմանները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին համաձայնեցվում են Կողմերի միջև:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերից բխող նրանց իրավունքները և պարտականությունները:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում Կողմերի միջև ծագող տարաձայնությունները կարգավորվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 6

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի նախատեսած կարգով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված և սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից, կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը հերթական հնգամյա ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մինսկ քաղաքում 2011 թվականի մայիսի 18-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանության շուրջ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011թ. սեպտեմբերի 2-ին